

տակարան պատուէրներով յիշեալ տարափոխիկ անտին հարուածոց առաջը առնելու մեծապէս աշխատել է. և դուրսէ մասամբ իւր անոր անձնանուէր ջանքից յաջող արդիւնքն է, որ յիշեալ տարափոխիկ սոսկ կալի անտը սաստիկ հարուածներ չկրցաւ ընել Հայոց թաղին մէջ վասնի քաղաքիս մէջ Հայոց ազգէն ընդամենը 90 հոգիի չափ միայն մեռան քոլէոյէն:

Աղքատասիրաց ընկերութեան բարեխնամ ջանքն էս չեմք կրնար լուծեամբ անցնել. թէպէտև Արշալուստի 758 թուոյն մէջ անոր մէկ անգամոյն, այսինքն յարդոյ պարոն Յոսէանէս Ս. Ղուշատաւ լեռնին անձնանուէր ընթացքը և արիւթիւնը դուրսից մամբ յիշատակեցինք, սակայն յիշեալ ընկերութեան միւս անգամներէն ունիք ևս ոչ սակաւ բարեջան փութով 'ի դործ գրին իրենց ազգասիրական պաշտօնը: Ասոնց մէջ զմիւրութեան և շնորհաւորութեան արժանի կը համարենք մեծարդոյ Ստեփան աղա Յոսէ. Տէտէանին փութով խնամատարութիւնը, որ քոլէոյի սաստիկ եղած ժամանակը անգամ, յատկապէս դեղէն կիշներ, ուր ապաստանուած էր իւր ընտանիքը, աղքատ Հայ հիւանդաց արկաւոր եղած տնօրէնութիւնները 'ի դործ գրեն. ու և ազգային հիւանդանոցին ամեն կերպ պարտքը ողջու համար. քանզի յայտնի է. թէ յիշեալ հիւանդանոցին հոգաբարձութիւնը Աղքատասիրաց ընկերութեանը յանձնուած է:

Մ. Ա. Հ. Ա. Գ. ՈՅԺ



Յանալի սրտի կը լսեմք, թէ վեհափայլ սրբադասութիւնը Մատթէոս կաթողիկոսը Օգոստոսի քին իւր մահականացու ընթացքը կը բերէ 'ի սուրբ չմիածին:

'Կորին Արքայութիւնը իզմիրի մէջ առաջնորդական պաշտօն վարեց, Պատրիարք եղաւ 'ի Ա. Պօլսի վերջապէս ընդհանուր ազգին ընտրութեամբը՝ ամենայն Հայոց կաթողիկոս կարգեցաւ 'ի սուրբ չմիածին: Այս ամեն հոգեւորական բարձր պաշտօններուն մէջ ազգասիրական բարեխնամ ջանք և ուսումնասիրական բարեփայտ եռանդ մի յոյց տուաւ: Հանդուցելոյն դրանոր աշխատասիրութիւնները, որոց մէկ քանին 'ի Ա. Պօլսի և մէկ քանին

թիւ գլխով ապանոս գաւազան, մէկ արծաթի մանաւաճառ, մէկ արծաթի խաչ, արծաթապատ Աւետարան մէկ ձեռք գրեւոր պատարագի, բոլոր կեկեղեցական զըրեանքն իսկ են. ունիմ նաև մէկ կերպաս փերն, մէկ չուխայ նոր վերադրու, վերաբ ևսայն. զորս բոլորն նոյն կեկեղեցին ձգեմ յիշատակ բաց 'ի արծաթի խաչն որ խոստովելի եկեղեցին տառապաւ առնուած ըլլալով՝ կը խնդրեմ որ իր տեղն դարձնել տայ իմ կուսակապտարն և իմ հոգիս ազատէ:

10. Մանչևթիկի կեկեղեցւոյ տան մէջ ունիմ մի գրքատուն, որ կան 3000 հատորի չափ Հայերէն, Գաղղիերէն, Ռուսերէն, Անգլիերէն և այլ լեզուք մատենաներ, կան հարկաւոր արծաթի և պղնձի անդրադրեր, և քանի մի ձեռագիրք, որոցմէ Միքայէլ Պատրիարքի պատմութիւնն Պօլսոյ Միջագիւղի թանգարանէն աւանդ առեր եմ, և իր տեղն դարձուի. իմ նմարանիս մէջն են 6 արծաթի կերպարացի դէպք, չորս նոյնպէս չափի, և 6 արծաթի դանակ հանգիւրծ մէկ անտուկ և երկու կոմիտը լեցուն գրեւորով. վերն ունիմ մի ամբողջ լուսանկարի դործիք, և հարկաւոր բուզէյլ զինի և բրանտի: 3000 հատոր գրեւորքն կուսեմ Ա. Պօլսոյ հիւանդանոցին և իզմիրի Մեար. Գալուստի. ամեն միացեալն ծախուի և գումար ըլլայ մի կուսակապտարի մօտ:

11. Մանչևթիկի մէկ ամբողջ տպարան ունիմ հանգիւրծ մամուլ և ամեն պարագայիւք, 11 տեսակ պղնձի մայրեր, քանի մի տեսակ պղնձափայտիկ հայր: Երկու ամբողջ մայրերն և այլ երեք տառ ձուլիչ Նորմանդոնի մօտն է, զորս տուեր էի գիր թափելու և մոտացմամբ միացիւր են: Աւելի մի տպարանն նաև 25 կապ թուղթ և 700 քիլոյի չափ Հայերէն և Գաղղիերէն տառք. ամէն

Տփիխի մէջ տպուած են, իւր հոգեւոր պարտոյց կատարման վերայ ունեցան մեծ ջանքը կը յայտնեն:

Տէր Մատթէոս սրբազնաստուրբ Կաթողիկոսը, որ ծնեալ ևս նեալէր 'ի Ա. Պօլսի, հաղիւ թէ 75 տարեկան պիտի ըլլայ: 'Կորին Արքայութեան մահուանը վրայօք սուրբ չմիածինէն մանրամասն տեղեկութիւններ ընդունելու, պիտի փութամք մեր ընթերցողաց հաղորդել զայնոսի:

ՓՈՒՈՒՄՆ ՅԱՍՏԵՍՅ

Տիր Կարապետ փարպալետի Դանգապետնց:

Հայոց ազգը ուրիշ ցաւալի կորուստ մի ևս ըրաւ: Անցեալ ամսոյ 25ին զիշերը՝ Հասնաղաբեանց գեւորաստիւ վարդապետը՝ Ա. Պօլսոյ խոսքիւր մէջ առ Աստուած փութեցաւ 'ի հասակի 51 ամաց:

Հայոց եկեղեցականաց մէջ հանդուցեալ փառաւորապէս կը փայլէր իւր բազմահմուտ զինանակաւութեամբը, լեզուազիտութեամբը և ազգասիրական եռանդեամբը. որուն անձխտելի ապացոյց մըն է իւր կտակը, զոր մեր ընթերցողները պիտի կարգան ներկայ թերթիս խնամսիրականին մէջ:

Գերապատիւ Կարապետ վարդապետին զբաւոր աշխատասիրութիւնները յայտնի են ամենուն. ինչպէս նաև Արքիպիսկոպիտ լրագիրը, զոր հաստատեց և կը խմբագրէր Մանչևթիկոյ մէջ, այս քաղաքին Հայոց հոգեւոր հովուի պաշտօն վարած ժամանակը:

Հանդուցեալ զինանակաւ վարդապետը սահմանեալէր մեծամեծ ծառայութիւններ մատուցանելու ազգին և անոր պատիւը պիտի աւելցնէր. բայց աւաղ, որ անբուժելի անտուկ մի վարակեալ, չկրցաւ դարման գտնել իւր ցաւոյն՝ ոչ Անդղիոյ ու Վաղարշապատի քոլէջներէն և ոչ Արքիպիսկոպիտի ու Ա. Պօլսոյ օգէն ու ջուրէն:

Ա. Զ. Գ. Ա. Գ. ՈՅԺ ՎԻՃԱԿԸ
Ի ԿԱՍՏԱՆՆԵՐՈՒՊՈԼԻՍ

Կերէի մեզ թէ անկարելի է, որ ազգին դործքերը բարեկարգ ընթացք մի ունենան որչափ ժամանակ որ կը գտնուին 'ի Ա. Պօլսի Հայ լրագիրք, որոց նպատակը և ջանքը ուրիշ բան չէ բայց միայն ազգային վարչութիւնը անարգել, անոր համարումը ամենուն առջև կոտորել և ժողովրդեան վստահութիւնը դանազան միջոցներով բառնալ: Բաղադրական ժողովոյն վրայէն, որ բարոյական իշխանութեամբ միայն 'ի դործ պիտի գրէ իւր ամենադժուար պաշտօնը:

Իրաց այս ցաւալի կացութեանը մէջ, տարակոյս չկայ թէ ազգային դործքերը, որոնք խիստ ձախորդ վիճակի մը մէջ կը գտնուին այժմ, երթալով ևս ա-

տը ծախուին և գումարն մեր կտակաւորութիւն յանձնուի: 12. Մանչևթիկի մէկ բժշկի՝ որ Վալիդիլ ստորիս կը նստի, 4 լիւրա 18 շիկի պարտք ունիմ. նոյնպէս ձուլիչ Նորմանդոնի 14 շիկի չափ. նոյնպէս Պարիզ, ուր Վալիլ 48. ձուլիլն 7 փրանք և ուր լաւ Հարալ 38 թիւ՝ ձեւունի կաղնիքներն 16 փրանք տալու եմ. աւանոր ամբողջապէս վճարուին և հոգիս ազատուի:

13. Մանչևթիկի գրոցայ մէջ կան իմ շնամբ Գաղղիերէն և Հայերէն բառարանն, Գաղղիերէն Հայաստանի տեղագրութիւնն, Գաղղիերէն Միքայէլ Պատրիարքի պատմութեան թարգմանութիւնն, երկու հատոր կեկեղեցական պատմութիւն և մի հատոր ընդարձակ քրիստոնէական վարդապետութիւն ևս ըստ մանր գրութեմ. ասոնք յանձնուին խոստովելի թանգարանին. դուրսէ որ մի տպուին:

14. Մանչևթիկի տպարան տպարանս կան տէր Յովհաննէս Խաչիկեանի անցըն և իր պատկերն սղոննի վերայ փորուած հոն է: Այն գրքի ձախատի խաչն ծուռ գրութիւն է և թուականն 1864 է, և զրբին մէջ քանի մի տարաբախալ կան, որոց ցանկն իմ և անոր թղթակցութեան մէջն է: Մեր գրաւարին այն վրիպակներն չարել տուին և ձախատին հետ մէկտեղ տպուին 1865 թիւ դեկտըմբ: Նոյնպէս անոր 500 պատկերն տպուին և իմ ծախարով թղթակալով ընկելով՝ բոլորն մէկ սնտուկ լեցուի և իր հաշուին Կաթողիկոսի իրեն խրիւրի: Նոյնպէս հոն տպած պատրաստի կայ Միքայէլ Պատրիարքի պատմութեան առաջին հատորն. անիկայ ալ թղթակալով կապուի և մեր բաժանորդ վճարողներուն ձրի բաժնուի և միացեալն ծախուի 'ի լաճ մեր:

15. Պարիզ կուստանեան Պօլսոյ աղայի մօտ մի սարկ

ուսել պիտի դժուարանան: Հիմա կուստան ազգային սնտուկը բոլորովին դատարկ է. տարի մը կը լուծուինայ որ պատրիարքարանի գործակալաց ամսական չեւորուած. ազգային զանազան խորհուրդները և հոգաբարձութիւնները՝ բաց 'ի սուրբ թրիշի հիւանդանոցին հոգաբարձութեանէն, չեն գումարուիր և դործէ դադարած են, դրամ չըլլալուն պատճառաւ: Ազգային սնտուկը մէկ միլիոն դոլարի չափ պարագունի և թէպէտ հինգ հարիւր հազար դոլարէն ևս աւելի ալ առնելիք ունի, բայց այս առնելիքը թերայոյս կամ բոլորովին անյոյս են, վասնից պարտապանները չեն ուզեր վճարել. և չեմք գիտեր թէ ազգային վարչութիւնը սաստիկ միջոցներ բանեցընելով կը յաջողի յիշեալ թերայոյս առնելիքը ձեռք բերել, մանաւանդ այնպիսի ժամանակի մը մէջ, որ քոլէոսն և Ա. Պօլսոյ մէջ պատահած վերջին սոսկ կալի հրդեհը Հայ ժողովրդեան խեղճութիւնը և աղքատութիւնը աւելցուց:

Չորս տարի կը ըլլայ, որ ազգային ընդհանուր տուրքը չէ վճարուած. բայց յայտնաւ, Սահմանադրութեան տրամադրութեանցը համեմատ՝ քուէարկուած տարեկան 75 դոլար տուրքը՝ ըստ մեծի մասին չէ վճարուած: Վարչութիւնը թէպէտև անցեալները փորձ փորձեց ազգին ստիպողական պիտոյիցը համար կամաւոր նուէր ժողովել 'ի հաշիւ անցեալ չորս տարուան անվճար ընդհանուր տուրք, բայց դժբաղդաբար իւր ջանքը ապարդիւն եղաւ:

Վերջապէս ամսոյ 23ին Վալիկոստի սուրբ Ղուսաւորիչ կեկեղեցին դումարուած ազգային ընդհանուր ժողովոյն մէջ, ուր միայն 53 երեսփոխանք կային, որոշուեցաւ որպէսզի Բաղադրական ժողովը ձեռք դրնէ պահանջելու 75 դոլարի տուրքը, և վճարել չուզող քուէարկուած գէմասիպողական միջոցները դործածէ Լարճրագոյն 'Իրան ձեռամբ: Տար Աստուած, որ այս որոշումէն ձախորդ հետեւութիւններ չծագին 'ի մեզս ազգին:

Ընդհանուր ժողովոյն յիշեալ նիստին մէջ, երեսփոխանք ունիք առաջարկեցին ազգային ծախքը պակսեցնել և յարմարեցնել զայն ազգային եկամտից: Այս առաջարկութիւնը թէպէտև շատ օրինաւոր և լի խոհմտութեամբ կերէի մեզ, այսու ամենայնիւ առայժմ ժողովը ուղադրութեան արժանի չհամարեց զայն. բայց տարակոյս չկայ թէ վերջապէս հարկ պիտի ըլլայ նոյն առաջարկութիւնը 'ի դործ գրել, այսինքն ազգային դործակալաց թիւը և ծախուց դումարը պակսեցնել:

Բաղադրական ժողովոյն անգամներէն ունիք իրենց հրամարականք տուած են զանազան պատճառներով. 2 եմք կրնար ըսել թէ այս պատճառները ապօրինա-

ունիմ, որոյ մէջ կան 25 լուրարդ որոց արժէքն է 13 500 փրանք, երկու օրիւղապիտի վիւ տը Պարիսի որոց արժէքն է 850 փրանք, հինգ հինգերորդական օրիւղապիտի կումիւնալ, որոց արժէքն է 405 փրանք, իմ մօտ սնտուկիս մէջ ունիմ 5 օրիւղապիտի Գրեմի խմբակիւր, որքինմ արժէքն է 1500 փրանք. բայց այժմ հաղիւ թէ 1200 փ. արժեն: Ասոնք ամէն ծախուին և դումարն իմ կտակաւորապէս Ղուսաւոր վաչային ձեռքն ժողովուի:

16. Զէյթունի անուամբ՝ կտորածի առեն 3000 Փըրանի չափ օղնութիւն ժողովելի և Պ. Պ. Լանդուալի և Մուրատեանի զխտութեամբ հոն խրկեցի կամ Փարիզ աւանդ պրիւք. յետոյ Յակոբեան աղան անցեալ տարի ինմ յանձնեց և լուս: Բերմանէն ալ այս տարի եկաւ 279 փրանք, որ տուիւին Լոնտոն Պ. Սէթ Սթաբարեանին մօտն է: Այս գումարս ստացուի և մեր չորս լիւրայի հետ միացունելով իր տեղն խրկուի:

17. Իմ ձեռքս եղած ստակն իմ թաղմանն բաւական է. խնդրեմ որ իմ թաղումն պարզ ըլլայ և անշուք: Իմ գերեզմանիս վերայ տեղուի մէկ սկն մարմարիտն կամ գրանիթ մէկուկէս մէղր երկայն և վրան գրուի Հայերէն և Գաղղիերէն, «Կարապետ վարդապետ Դանգապետեանց, ծնեալ 'ի 14 Մայիսի 1814 ամի 'ի Համադան և վախճանեալ 'ի Գահիրէ յամի 1865 . . . ամի»:

18. Բսանուհինդ տարի է եղեր մէկ փափաղ միայն ունեցիւ եմ. և այն իմ սիրելի աղբիւ համար: Մեր ժողովրդեան՝ այլ ազգաց համեմատութեամբ, արտաբոյ կարգի թշուառութիւնն տեսնելով, անոր պատճառն ուրիշ բան չիմ գտիւ բայց եթէ անոր անկթութիւնն տգիտութիւնն. և ասոր դարման տանելու համար ջանացիւր եմ ընդ զանազան ժամանակի մէկ ուսումնասիրմ:

ԿՈՍՏԱՆՆՈՒԹՅՈՒՆ 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ

նոր են, քանզի արտաքին կարգի համաբերություն և մեծ անձնանություններն պետք է ազդային պաշտոնի վարելու և Պոլսոյ մէջ ուր փոխանակ քաջալեւ ընթերցան և շնորհակալութիւն ընդունելու վասն ձրի աշխատութեանց, յանդիմանութիւն և անարդական խօսքեր կը լսուի միշտ հրապարակական 1-2 Հայ թերթերէ : Սեր գիտաւորութիւնը՝ օրինաւոր և խոհմադրականութեան օգուտները ուրանալ չէ, այլ վատահամբաւութիւնը դատապարտել և անորմէ յառաջ եկած ազդաւն հետեւութիւնները ցուցնել :

Իզմիրի ազդային երեւելիներէն ոմանք հետեւեալ նամակը յուղարկեցին մեզ՝ ի հրատարակութիւն :

Յարգոյ խմբագիր :

Մէծնուային 616-թուոյն յանձնարարութեամբ անանուն երկար նամակը կամ լաւ ևս է ըսել պարտաւարկը կարողացինք . որուն հեղինակը՝ որ Կ. Պոլսոյ սրբազան Պատրիարքին բոլորը առած պաշտօնէն հանելու հրովքէ, ուշիմ, հանձնարեղ և Ազգիկնախովը վառուած անհնաւայրական անձինք անուանելով դանոնք, հաւանականաբար անոնցմէ մէկը պիտի ըլլայ : Բայց ո՞վ որ և է, ամենապատիւ տէր Պոլսոյ սրբազան Պատրիարք Հայրը անխնայաբար և ապօրինաբար կերպիւ կը պախարակէ և կը զրկարտէ : Այս անիրաւ յարձակման պատասխանը՝ եթէ պատասխանուի արժանի կը համարուի, Կ. Պոլսոյ Հայոց խոհմադրական ազգային մասին թող տալով, միջ կը լուծուի մի ամենայն դժուարութեամբ ըրողքներու նամակագրին այն խօսքին դէմ որ կըսէ, «Ազգ. յիշեց Զմիւռնացոյ» անոր դանդաղութեան և ինքնասիրութեան քաջածը և անհից ազատելու փափաքը» :

Զմիւռնիոյ Հայ ժողովուրդը՝ թէ՛ Սրբազանին խմբիկէն մեկնելու ժամանակը և թէ՛ ուրիշ շատ պարագայից մէջ, անմխտիկ ապացոյցներ տուաւ իւր ողբիական անկեղծ սիրոյն և իւր խորին դժգոհականութեանը ի Նորին Սրբազանութենէ : զոր պիտի չթողուի Կ. Պոլսոյ երթալ, եթէ խօսք չտար որ իզմիրի վիճակին առաջնորդութիւնը իւր վերայ պիտի պահէ միշտ և պատրիարքութեան հրամարտութեանը դարձեալ պիտի դադարէ իւր բանաւոր հօտը անձամբ կառավարելու :

Քաղաքիս Հայ ժողովուրդը միևնոյն ջերմեանդ ըզգացմունքը ունի միշտ, և զրկարաց ամենայն սիրով և անհամբերութեամբ կը սպասէ իւր որդիական ծոցը ընդունելու ամենապատիւ տէր Պոլսոյ սրբազանը իւր ամենասիրելի հոգեւոր Հայրը և իւր սրտական խոհմադրական Սրբազանը : որ օտար ազգաց ու Եւրոպացոց առջև անգամ, քաղաքիս Հայ ժողովուրդեան պատիւը աւելցուց շատ պարագայից մէջ :

Խնդրելով, յարգոյ խմբագիր, որ այս նամակը հրատարակէք ձեր պատուական Սրբաւարոյն մէջ, միամբ քաղաքիս յարգանքը, և այլն : Ազգաւոր ոմանք : Իզմիր, 18 Սեպտեմբեր 1865 :

Միաբանութիւն հաստատել և դիւրութիւն դրոյց մի բանալ և արժանաւոր եկեղեցականներ պատրաստել, որք այլեւայլ դաւաններ տարածուելով և իրենց սովորածներն սիրելով մեր ազգի մանկանց մէջ, գիտութիւններ, գրականութիւն և հրահանգ ամենուն մասնակցին :

Կոստանդնուպոլսոյ, Փարիզ և Մանչեսթր իմ մտադրութեանց կենդանի վկայ են . ուստի ինչ որ ես իմ կենդանութեանս չկարացի ընել իմ մահուանէս յետոյ կը յանձնեմ իմ կտակակատար Կ. Նուար փառային որ ընէ : Իմ անունս փոյթ չէ որ յիշուի կամ ո՞չ . բաւական է միայն որ իմ փափագս կատարուի : Հետեւաբար իմ վերոյիշեալ ստացուածքն վաճառուելէն և պատրաստ դուռներն ձեռք բերելէն զինի՝ կարծեմ թէ հազար գինիի զուտ գումար կը կազմուի, այս գումարն կը ընդգրկեմ այնչափ ատեն շահով բանեցունէ՝ մինչև որ և հազար գինիի գումար ըլլայ . ապա գրոսագրութիւն հաստատուն եկամուտի դնելով՝ անոր տարեկան եկամուտով 10 աշակերտի համար իմ անուամբ մէկ դիւնրօթիկ դպրոց բանալ տայ Կիլիկիայի կողմերն ուր որ ինքն պատշաճ տեսնէ . վերադառնալի, գաւառական և այլ անօրէնութիւններն իր գերզատաւորի մէջ պահելով . որով և Աստուծոյ օրհնութեամբ, ազգի երախտագիտութեանն և իմ գոհունակութեանս արժանի ըլլայ՝ ինքն, իւր ընտանիքն և բոլոր ազգատոհմն յորդոյն օրդիս, ամէն :

19. Իմ դէմպր փոտի պրան Պոլսոյ Նուարեանին տիրոյ յիշատակ կը ձգեմ, որ քանի տեսնէ զիս յիշէ :

Կարապետ վարդապետ Դաննապարեանց :

Կայսերական հրովարտական վսե . Կապուլի փառան՝ Լորդարութեան բարձր . առեանին անդամկարգեցաւ :

— Զայտի՛ն որ ի նպատակ ամեն ազգի հրկիզելոց ընդհանուր ստորագրութիւն մի բացուեցաւ ի մայրաքաղաքս, և Բարձրագոյն Գրան զխաւոր պաշտօնատարները, նմանապէս Պաշտօնական Հայ, Եզրն, Հրեայ ու Եւրոպացի երեւելի անձինք ու պաշտօնատարք քիչ կամ շատ դրամական օգնութիւններ ըրին և ընելու վերայ են : Սինչև այս օրս յիշեալ ստորագրութեան ցուցակին դուռները, 1 Փիլոն 685, 240 դուրուշի հասաւ : Այս գումարին մէջ նշանակութեան արժանի է Ազգիպատի փոխարքային շնորհած նուէրը՝ որ 750 հազար դուրուշէ :

— Կըսեմք թէ Զմիւռնացի վսեմափայլ Նուար փառան՝ 20 հազար դուրուշ յուղարկել է ամենապատիւ տէր Պոլսոյ սրբազան Պատրիարքին, Կ. Պոլսոյ Հայ ազգային հրկիզելոց բաժնունելու համար :

— Իրանահու ընդհանուր կառավարիչ վսեմափայլ Տաուլ փառան մօտերս, օմանեան յատուկ գործէթով, պիտի մեկնի Պէրսի վերթաւ : Թէպէտե՛ն ի սկզբան զրոյցուեցաւ թէ Տաուլ փառան՝ քանի մը պատճառաց համար, իւր հրաժարականը տուած է, բայց Օմանեան բարեխնամ կառավարութիւնը նոյն պատճառները չափաւորելով, Կ. Վսեմութիւնը յանձնառու եղաւ իւր բարձր պաշտօնը շարունակելու :

— Նոյն ժամանակ վսեմափայլ սըր Հէնրի Պիւլքէր, որ իւր պաշտօնէն հրաժարեցաւ՝ կը պատրաստուի Լոնդոն վերադառնալու . իսկ անոր յաջորդը լորտ Էյնս մօտերս կը սպասուի ի Պոլսոյ :

— Կ. Պոլսոյ Լատինոյ դեսպան վսե . Բրօքէշ Օսթէն սեպտեմբեր, որ քանի մը շաբաթէ ի վեր Սիւրիոյն Կրօց քաղաքը կը բնակի, պիտի չվերադառնայ, կըսեն, ի մայրաքաղաքս, և անոր պաշտօնը պիտի յանձնուի Պուրկէր սեպտեմբեր, որ ծովային զօրութեանց նախորդ սեսունէն էր :

— Կ. Պոլսոյ Վիզադիւս անուն յունարէն լրագրոյն մէջ հետեւեալ կը կարդամք .

«Ընդհանրական սրբազան Պատրիարքը՝ ընկերութեամբ դերապատիւ Սինոդական արքեպիսկոպոսաց ոմանց, կայսերական պալատը դնաց, ուր Հայոց Պատրիարքին և Հրեայ մեծ Ռաբբինին հետ պատիւ ունեցան շնորհակալութեան աղերսաւորելու մատուցանել օգոստոսական Սուլթանին վասն ամենայն բարեբաւութեանց՝ զորս կայսերական կառավարութիւնը քոչկոյնի ժամանակը, մարդասիրաբար ըրաւ բոլոր բնակչաց մայրաքաղաքիս» :

ՔԱՆԱԶԱՆ ԵՒ ԻՔԵՐ

Զմիւռնիա, 18 Սեպտեմբեր :

Մեր ընդհանուր կառավարիչ վսեմափայլ Պաշտօնական չընթերցական նամակաւ մի իմաց տուաւ մեծ սրգոյ հիւպատոսաց, թէ Բարձրագոյն Գրան հրամանաւ մեծաշուք Հիւանի—Պէյը Իզմիր եկած է, քաղաքիս և անոր շրջակայից անշարժ ստացուածքը արձանագրելու :

— Ներսէս Վսեմութիւնը, դարձեալ ուրիշ չընթերցական նամակաւ մի, կը ծանուցանէ յիշեալ հիւպատոսաց, թէ Բարձրագոյն Գրան իւր հաւանութիւնը տուաւ և վաւերացոյց քաղաքիս անշարժ ստացուածք ժողովոյն որոշումը՝ զոր ըրած է Իզմիրի փողոցաց կազմով լրատուութեան տրոյ համար . ուստի օտար տէրութեանց հպատակներն ևս, որոնք տուններ և խանութներ ունեն, կը պարտաւորին նոյն տուրքը վճարելու :

— Լրագրոյն նախընթաց թուով, Հէլսիլիի Ապտէլ—Գատէրին Իզմիր գալը ծանուցինք : Յիշեալ հոշաւաւոր Եէյը, որ քիչ մը հիւանդ է, անցեալ շաբաթ քաղաքէն մեկնեցաւ Ստորիք երթալու համար :

— Հոռոյ սրբազան Պատրիարքին կոնդակաւ, յարգոյ մօսիւ Անանիա Աւելթիին՝ Սրբոյն Մեծին Գրիգորի կարգին ապաւոտ անուանեցաւ, ի վարձատրութիւն իւր ծառայութեանց, զորս 30 տարիէ ի վեր մատուցած է Իզմիրի Լատին արքեպիսկոպոսաց և հոռոյականաց :

— Ստորիկացի նաւու մը նաւապետը անցեալ շաբթու ինքզինքը սպաննեց տարձանակի հարուածով մի : Կըստատեն թէ անոր յուսահատութեան պատճառը, Պոթթեմէն մինչև Իզմիր ըրած իւր երկար ու տաժանելի ճանապարհորդութիւնն է, որ անձնասպանին կարծեօք, ամերիկացի նաւապետաց արհամարհութիւնը իւր վերայ պիտի հրաւիրէր :

— Աւարիոյ նաւատորմիդը՝ հրամանատարութեամբ մօսիւ Թէկէթօֆ ծովապետին, Ռատուի նաւահանգիստը կը զոռնուի :

— Զայտի՛ն որ քոչկոյնի պատճառաւ, Կ. Պոլսոյ հայերէն լրագրութիւնները և հանդէսները ո՛չ միայն կանոնաւոր կերպիւ չկրցան հասնիլ Իզմիր, այլ և հասած ժամանակին ևս չկրցան բաժնուիլ կանոնաւոր կերպիւ : Վերադարձաւ այս վիճակն տակաւին կը շարունակուի . օրինակի համար երկուան շոգեմաւով՝ Պոլսոյ Հայ լրագիրներէն միայն Մէծնուան հասաւ :

— Կըսուի թէ Խորիմեան Մկրտիչ վարդապետը վաւաք երթալու համար ճամբոյ ելլէ, և ճամբան վերաւորուի ու Մուշ դարձնէ : Այս լուրը թէպէտ ստուգութեան կարօտ է, բայց երկու տարի առաջ ալ եղած ասանկ փորձ մը և Խորիմեանէն տակաւին դուրս թիւն մը Պոլսոյ հասած չըլլալը կապիւծի տեղի կուտան : Ժ. Ս. Ս. Ս. Ս.

ՄԵՌՆԵԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Տարածման քանակի օրհաս մի անմխտիկ սոց մեջ ձգեց քաղաքիս Հայ երեւելի գերդաստան մի :

Մեծաշուք Սեփագրեան Թագուր աղային երկրորդ օրդին աղա Պօղոսը, որ շատ անկեղծաբար ինքն իսկ վստահաբար աստիճանով ծաղիկ հասակին մեջ երեկ գիշերաւ Աստուած փոխեցաւ, քիթօյլի ճիւղադուրեմով, ի կսկիծ սրտի իւր ծնողաց, Հանգուցելոյն յուղարկաւորութեան հանգիստը՝ այս օր կեսօրէն ետեւ կատարեցաւ փառաւորապէս եւ ուղեկցութեամբ Հայ եւ օտարազգի բազմութեան :

ԵՒ ԵՒ ՏԵՐԵՒԵՆ

Մեր վաճառանոցին մէջ այս շաբթու ծանուցուր կենդանութիւն մի կը տրիէր . հետեւաբար շատ գործաւորութիւններ և յաջող վաճառմունքներ եղան : Բամպակներ անցեալ շաբթուանէ ի վեր կուզուէին և այս շաբթու 1100 հակի չափ ծախուեցաւ, ևս քան զէս աւելի քիւրդով . այսինքն 670 հակ մինչև 800 դուրուշ կենդանաբար ըստ տեսակին : Քաղաքիս մէջ 1800 հակ պատրաստ բամպակի կայ . և նոր հունձը անցեալ տարուանին հազիւ թէ կէսը կը կարծուի : Լիֆոնը ևս կուզուի . և 220 կողով վաճառուեցաւ 104 հակ մինչև 105 1/2 դուրուշ չէքին :

Ուշաւոր բուրդը դիւրաւ վաճառ է և 600 կենդանաւոր անուշայ պարանք ծախուեցաւ Լիֆոնիայի համար, 380 դուրուշ կենդանաւոր :

Կոր հունձին փառամուտը եկաւ և 1000 կենդանաւոր թրեւստու տեսակ՝ 120—127 1/2 ի վաճառեցաւ : Հին հունձէն ևս 4000 կենդանաւոր Լիֆոնիայ տեսակ փառամուտ ծախուեցաւ 87 ուկէսի կենդանաւոր :

Տորոնը շաբթուա առջի օրերը կուզուէր և 2300 խուրձ վաճառեցաւ 260 դուրուշ կենդանաւոր՝ Պալիւրի տեսակ . սակայն այժմ քիչ մը թուէ :

ԾԱՆՈՑՈՒՄ

ՄԱՋԻ ՆԵՐԿ

Օ Սալէ կոչուած ջուրը սքանչելի կերպիւ կը ներկէ ձիւրկած մաղերը և մօրուքը, և իրենց առջի գոյնը կուտայ անոնց, առանց որ և է նախապատրաստութեան և լրացման : Այս պատուական գլխարկ յաջողութիւնը երաշխաւորուած է մօսիւ Լիֆոն Սալէ քիմիագործէն, որ անուշահոտ իւղի կը կոծածաւ ի Փարիզ, Պիւսի փողոցը : Յիշեալ մաղի ներկը կը ծախուի Իզմիրի մէջ մօսի Ժ. Քապիլլանին խանութը, որ ի Սինոդական խանէ :

ՄՈՒՍԱՅՔ Ս. ՄԵՐՈՒՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ԶՄԻՒՆԻՏԻՏ

Առաջին դասարանին աշակերտաց ուսանաւոր աշխատասիրութիւններն են, որոնք ի քաջալերութիւն ուսանողաց են ի ցոյց արդեանց Մերոպեան վարժարանին, ի յոյս ընծայութեան ի տպարանի Տեղեւան, որ ի Զմիւռնիա :

Այս տետրակը՝ որ ուրեմա 32 էրեւն բաղկացեալ է, կը ծախուի 3 դուրուշի հատը, ի նպատակ ծախուց թանգարանի յիշեալ ազգային վարժարանին :

Խմբագիր—տէր լրագրոյն, Դ. Լաւա Գ. Պալլապալէն :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՒՍՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ